

ՈՒՂԵՅՈՒՅՑ

Tandem վճարումների ընդունման տերմինալների միջոցով վարկերի մարման:

Դուք վճարումը կատարում եք տերմինալի էկրանին ձեռքի պարզ հպումով: Ամեն ինչ շատ հեշտ է, անհրաժեշտ է ընդհամենը հետևել սենսորային էկրանի տեքստային հրահանգներին: Նախ՝

1. ծառայությունների ցուցակից ընտրեք **“Նորվիկ Կրեդիտ”** ծառայությունը,
2. համապատասխան դաշտում հավաքեք Ձեր վարկային պայմանագրի համարը և Ձեր անձնագրի համարը, առանց սերիալի (առանց տառերի):
3. համոզվելով, որ գրված տվյալները Ձերն են՝ սեղմեք **«Հաստատում եմ»** կոճակը:
4. Մուտքագրեք այն գումարը, որը ցանկանում եք վճարել:
5. Այնուհետև Դուք կտեսնեք հետևյալ հրահանգները՝
 - **«Վճարում ըստ գրաֆիկի»**
 - **«Մուծել ամբողջ գումարը»**
 - **«Ամբողջ պարտքի մարում»**
 - **«Բաժանել գումարը»**

Գումարը կարող եք մուծել ամբողջությամբ՝ սեղմելով **«Մուծել ամբողջ գումարը»**, կամ կիսել՝ սեղմելով **«Բաժանել գումարը»** կոճակը: Եթե ընտրեք **«Բաժանել գումարը»** տարբերակը, ապա համապատասխան դաշտում նշեք այն գումարը, որը ցանկանում եք վճարել: Մնացած գումարը կարող եք օգտագործել այլ ծառայության դիմաց վճարում կատարելու համար՝ սեղմելով **«Այլ վճարում»**, կամ պահպանել գումարը վիրտուալ քարտի վրա, սեղմելով **«Ստանալ վիրտուալ քարտով»** կոճակը, հետագայում օգտագործելու համար:

Ուշադրություն. *Անհրաժեշտ է հիշատակել, որ Տանդեմ ընկերությունը չի գանձում միջնորդավճար մատուցվող ծառայության դիմաց:*

Հարգելի հաճախորդներ, Ձեզ համար աշխատում է Tandem ընկերության հաճախորդների աջակցության ծառայությունը: Վճարումների հետ կապված ցանկացած հարցի դեպքում խնդրում ենք զանգահարել **010 44 07 46** հեռախոսահամարով:

Շնորհակալություն!!!